ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/160-2019
«04» 11 2019թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման դրույթներով և ի կատարումն Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանի 12.2 կետի 12.2.1 ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի նոյեմբերի 21-ին Արարատի մարզում իմ ղեկավարությամբ կազմակերպել և անցկացնել շտաբային ուսումնավարժություն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավի դեպքում» թեմայով:

2. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ փոխմարզպետ Ա. Նազարեթյանին

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Մ.Մարգարյանին:

3. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

1) խաղարկման խումբ.

ա. խմբի ղեկավար Արարատի ՄՓՎ ՃԿԿ պետ պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ս. Գալստյան

բ. խմբի անդամ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ փ/ծ կապիտան Գ. Եփրեմյան

գ. խմբի անդամ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ փ/ծ կապիտան Ն. Զալյան

2) վերլուծության նախապատրաստման խումբ.

ա. խմբի ղեկավար Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Հ. Սարգսյան

բ. խմբի անդամ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Զ. Պողոսյան

գ. խմբի անդամ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ Հ. Կարապետյան

3) միջնորդական խումբ

ա. խմբի ղեկավար Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ կապիտան Գ. Թեմուրյան

բ. խմբի անդամ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ փ/ծ ավագ լեյտենանտ Հ. Մարկոսյան

գ. խմբի անդամ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ փ/ծ կապիտան Գ. Եփրեմյան

4.ՈՒսումնավարժությանը ընդգրկել՝

1) Արարատի մարզային փրկարարական վարչությանը.

2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը,

3) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը,

4) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինարարության բաժինը,

5) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը,

6) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը.

7) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արարատի մարզային վարչությունը.

8) «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կենտրոնական տարածքային կենտրոնը(համաձայնությամբ).

9) Արարատի մարզի Նարեկ, Այգեզարդ և Այգեպատ համայնքները:

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) կազմակերպել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի մշակումը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը.

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2019 թվականի նոյեմբերի 14-ին :

4) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վաչության հետ համատեղ ճշգրտել «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավի դեպքում Արարատի մարզի գործելու պլանը»,

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արարատի մարզպետին:

8. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 04/11/19 18:07:13 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ